Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1 -ի N 78 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐԻ

1.	Ծրագրի նպատակը	«Ջերմիկ անկյուն խմբային տների» ծրագրի նպատակն է՝ միայնակ, խնամքի կարիք ունեցող հաշմանդամների կենսապահովման նվազագույն պայմանների և կացարանի ապահովումը:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ջերմիկ անկյան բարեկամներ» ինկորպորացիա, հասցե՝ ԱՄՆ, 1037, Արիզոնա 85280
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն , ՀՎՀՀ 01242562
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է Հայաստանում՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանում (Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն) և Կոտայքի մարզում (Առինջ գյուղ, 20 փ. 6 տուն), բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 3 161 248 (երեք միլիոն հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր քառասունութ) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7.	Բարեգործություն ստացողը	1) «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներո ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում է 14 երիտասարդ (5 տղա և 9 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 կրթահամալիրներից: 2) «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Կոտայքի մարզի Առինջ գյուղի 20 փ. 6 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում է 8 երիտասարդ (4 տղա և 4 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 կրթահամալիրից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը (շարունակելի):
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1638369 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր վաթսունինը) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) որից՝ գազ՝ 1012000 դրամ, ջուր՝ 165356 դրամ, էլեկտրաէներգիա՝ 345523 դրամ, հեռախոսակապ՝ 84000 դրամ, գազի սպասարկում՝ 31490 դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 01.01.2019-31.12.2019 ընկած ժամանակահատվածում: «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Կոտայքի մարզի Առինջ գյուղի 20 փ. 6 տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1522879 (մեկ միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր յոթանասունինն) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), որից՝ գազ՝ 1012000 դրամ, ջուր՝ 165356 դրամ, էլեկտրաէներգիա՝ 345523 դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 01.01.2019-31.12.2019 ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է հարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով՝ 1) Պայմանագիր՝ կնքված գազի (01.03.2009 թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9200 խմ. (1012000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրաէներգիայի (03.12.2014 թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9817 կՎտ/ժ (345523 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի (20.02.2009 թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 84000 դրամ՝ առանց ԱԱՀ –ի և ջրի (25.11.2017 թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140 խմ (165356 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) սպասարկման

		գրասենյակների մատակարարման և սպասարկման դիմաց վճարների, գազի մատակարարման և սպասարկման (06.10.2018թ.-3 տարի ժամկետով), որի տարեկան ծախսը կազմում է 31 490 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: 2) Պայմանագիր՝ կնքված գազի (21.06.2018 թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9200 խմ (1012000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրաէներգիայի (28.06.2018 թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9817 կՎտ/ժ (345523 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) և ջրի (10.12.2018 թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140 խմ (165356 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) սպասարկման գրասենյակների մատակարարման և սպասարկման դիմաց վճարների:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղված ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևան քաղաքապետարանի, Երևանի Աջափնյակ վարչական շրջանի, Կոտայքի մազպետարանի, Առինջ համայնքի վարչական շրջանի և հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ: Ինչպես նաև նախատեսվում է համագործակցություն սոցիալական աջակցության տարածքային մարմինների հետ՝ շահառուների ընտրության շրջանակներում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում դոնոր կազմակերպությանը: • Ծրագրի ավարտից հետո հաշվետվություն կներկայացվի նաև ՀՀ կառավարության 2003 թ.-ի հունվարի 16–ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով՝ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ